

V ԴԱՐԻՑ ՎԿԱՅՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԴՐՈՒԱՐ

Արմատական բառարանը մեկնում է՝ «կառքի կամ պատգարակի լծված ձի, ջորի, կառք, սայլ»։ Բառը չի ստուգաբանված։ Բառի ստուգաբանության պատմության բաժնում նշված մի քանի ստուգաբանական փորձերը գիտական ու համոզիչ չեն։ Մեզ հետաքրքրող բառը առկայանում է նաև՝ անդրավար, անդրվար, անդրավար, անդուար գրություններ։ Ահա մի քանի վկայություններ նոր հայկազյան բառարանից (այսուհետև՝ ՆՀԲ)։ «Առ կառքն կամ առ անդրվարօք»։ «Ոչ վարիչը, ոչ անդրավարը ի սպաս և ոչ ջորիք ի կառս լծեալ»։ «Արար ի ներքոյ լծոյ զտրմուղ վիզս և լեր անդրուար Քրիստոսի»։ Առաջին հայացքից գայթակղիչ է (անդր)ուար և (երի)վար իմաստային կապը, մանավանդ, եթե նկատի ունենանք իրանական բառ «գնալ» հիմքը։ Սակայն այս կապը անվերապահորեն չի կարելի ընդունել, այն դեպքում, երբ երիվարի ստուգաբանությունն էլ հստակ չէ։

Ինչ վերաբերում է անդրուարի բազմիմաստությանը, ապա տրամաբանորեն ենթադրելի է նախնական «կառք» իմաստը, որից էլ՝ «կառածի»։ Մեր կարծիքով բառը իրանական ծագում ունի, որի երկրորդ բաղադրիչը՝ ուար (վար) իրանական var «ծածկ, ծածկոց» արմատն է, որ հանդես է գալիս հայերենի իրանական մի շարք փոխառություններում։ Վարագոյր, նուարտան, տաղաւար, սաղաւար(տ) (ավեստերեն՝ sara-vāra, բառացի՝ «գլխի ծածկ») վարաիֆ, a-e հնչյունափոխությամբ՝ վերտ «գորհ», վերմակ և այլն։ Եվ, վերջապես, անդրուար բառի իմաստային համոզիչ զուգահեռ է նույն ուարվար արմատի առկայությամբ իրանական ծագում ունեցող ժանուար «գահավորակ, պատգարակ» բառը։ Սա նվազ հաճախական է, V դարում կիրառել է միայն Բուզանդը. «Այլ ժանուարս տայր նոցա զհետ Շապհոյ»։ «Որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և վաշտկանօք»¹։

Ժանուարի առաջին բաղադրիչը իրանական jaŋi «կին» բառն է, հետևաբար ժանուարի նախնական իմաստը՝ «կանանց պատգարակ, կառք», որ և հաստատվում է Բուզանդից բերված օրինակներով։ Ինչ վերաբերում է անդրուար բառի առաջին բաղադրիչին՝ անդր, ապա այն ամենայն հավանականությամբ իրան. andar «ներս»-ն է, և բառը նախապես ունեցել է «ներսից ծածկված պատգարակ, կառք» իմաստը։

Ի դեպ, վարաիֆ բառի ծագման մասին։ Եստեղիս, Գ. Զահուկյանը նշում է. «Վարաիֆ բառի իրանական ծագման պայմաններում պետք է ենթադրել, որ անդրավարաիֆ բառի հիմքում ընկած է իրանական կազմություն՝ մ. պ. andar «միջա-, ներքնա-» նախածանցով՝ հայերենում ժողովրդական ստուգաբանությամբ փոխված անդր(ա)-ի։ Անհնար չէ, որ այդ նախածանցով կազմություն լինի նաև տարբեր ձևերով գրված անդր(ա)վար, անդրու(վ)ար, անդուար «կառածի, կառք» բառը²։

1 Փառասկի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 163, 199։

2 Գ. Զահուկյան. Հայոց լեզվի տառաբանություն. Երևան, 1987, էջ 566։

ԳԻՆԵՋԻՆՈՒԹԻՒՆ

ՆՀԲ-ն գինեգէն-ը մեկնում է «գինով գինեալ, այսինքն արբեալ կամ արբուցեալ», գինեգինիմ-ը՝ «գինով գինեալ, արբենալ», իսկ գինեգինուրիւն-ը՝ «չարաչար արբեցութիւն, գինեկիզութիւն»։ Բառարանագիրները ավելացնում են՝ «որ գրի երբեմն և գինեզանցութիւն»։

Արմատական բառարանում գինի բառից բաղադրված ձևերի շարքում Աճառյանը նշում է գինեգէն կազմութիւնը, առանց բառի վերջին բաղադրիչի իմաստը մատնանշելու։ Հայկազյան բառարանը, փաստորեն, գին(զէն) բաղադրիչը համարում է գրաբարյան (իրանականից փոխառյալ) գէն-ը, որից գէնֆ, գինուաւ և այլն։ Այստեղ մեր կարծիքով մի անճշտութիւն կա, որը և որոշակի դեր է խաղացել բառի ուղղագրութիւն գործում։ Գինեգէն, գինեգինութիւն բառերում ոչ թե գէն-գին արմատն է, այլ՝ իրանական zadan րայի («հարկանել, խփել») zān հիմքը։ Այս հիմքով գրաբարում կան մի շարք բառեր՝ ասպազան, գաւազան...։ Zān-ը իր իմաստով նույնական է նաւ-ին. ակնահաւ, դիւահաւ, գինեհաւիլ ...Բերենք Փիլոնից երկու օրինակ, որտեղ նշված բառերի հոմանիշութիւնը ակնհայտ է. «Քանզի զի՞նչ են առ նոսա խոհակերութիւնք իմն և կամ ո՞ւր գինեգինութիւնք և կամ ո՞ր ինչ արբեցութիւնք»։ «...Ապա եթէ անարժան համարեսցի և ի բաց մերժեսցէ, որպէս ի գինեհարութեան, զանիշխանութեանն կրեսցէ շարիս»³։

Գինեզանցութիւն և գինեհաւութիւն ժողովրդական մտածողութիւն արտահատութիւններ են։ Հմտ. գինին գլխին խփել դարձվածը։ Մի խոսքով, գինեգինութիւն ձևը գէն բառի հետ շփոթութիւն արդյունք է և պետք է ուղղել գինեզանցութիւն կամ գինեգենութիւն (իրանական լեզուներում գործում է a-e հնչյունափոխութիւնը), որը ներկայանում է և հայերենի իրանական փոխառութիւններում՝ pati-պետ։

ԹԱԽԱՆԶ, ԹԱԽԱՆԶԻԿ

Թախանձ բառը գրաբարի բառարանները մեկնում են՝ «աղաչանք, պաղատանք», քախանձիկ-ը՝ «տաղտկալի», քախանձութիւն-ը՝ «նեղութիւն, դժկամութիւն»։ Ջախջախյանի բառարանում կա և Թախանձք «օժիտ» բառը, որը Արմատական բառարանը համարում է անստույգ։ Երկու բառարաններն էլ նշված բառով վկայութիւն չեն բերում։

Մեզ այդ բառը հանդիպել է դասական մատենագրութիւն մեջ, Եվսեբիոս Եմեսացու ճառերից մեկում։ Ահա այդ օրինակը։ «Այր ոք յորժամ կին ի խաւսումն առեալ զտնտեսեաց արենս հաստատէ, կոչէ զամենագէտ արինական դպիր առ ի զվարձանս և զթախանձս հաստատել. եւ մինչև ի միմեանս հասեալ ընդ այլումն ամենայնի և զանուն մահու ի վարձանական և ի Թախանձիկ գիր հարկանեն ի փառս հարսանեաց և ի սէր ամուսնոյն վայելեալ» (ԺԲ, 176—177)⁴։ Վարձանք բառը գրաբարում նշանակում է և «օժիտ»։ Վերը բերված օրինակում քախանձ-ը համանիշ է վարձանք-ին։ Նշված օրինակում հանդիպում ենք և գիր վարձանական ու գիր քախանձիկ կապակցութիւններին, որ պետք է թարգմանել «ամուսնութիւն կտակ», «պայմանագիր»։ Այդ է հաստատում վերոբերյալ նախադասութիւն շարու-

3 Փիլոնի Երրայեցւոյ Բանք երեք... Վենետիկ, 1822, էջ 148։

4 Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք ի հայս. Վենետիկ, 1826, էջ 419։

5 Տե՛ս Արմ., քախանձ բառի տակ։

6 Ճառերը հրատարակել է Ն. Ակինյանը՝ «Հանդես Ամսօրյայի» 1956—1959 թթ. համարներում։ Հղումները կատարել ենք ըստ ճառերի թվահամարների։ Ճառերում բերվող բաղմաթիվ բառեր գրաբարի բառարաններում ավանդված չեն։ Այդ մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան. Նորահայտ բառեր հայ մատենագրութիւն մեջ. — ՊՁ, 1987, № 4, էջ 130—137։

նակությունը. «Սու ոչ զիրեանց միայն զվճիռս մահու և զկենաց ի վարձանական և ի թախանձական գիրն հաստատեն, այլ և զուստերաց և զգստերաց հրամանս: Զի եթէ պատանեակ որդի լինիցի և մնասցէ որդի ի հաւրէն կամ ի մաւրէն, այս ինչ հրաման կայցէ և եթէ աղջիկ այն ինչ»:

Այսպիսով, թախանձ «օժիտ» բառը գրաբարում կա, և այդ իմաստը պետք է բառարաններում արձանագրել համապատասխան վկայությամբ: Ի դեպ, թախանձիկ (ինչպես և վառձանական) բառերը գրաբարի բառարաններում ավանդված չեն, և դրանք ըստ էության նորաօգտ բառեր են: Ինչ վերաբերում է թախանձ «օժիտ» բառի ստուգաբանությանը, ապա որոշակի բան չենք կարող ասել: Դժվար թե այն թախանձ «աշաշանք, նեղություն» իմաստային զարգացումը լինի: Ամենայն հավանականությամբ գործ ունենք անհայտ ծագմամբ մեկ այլ արմատի հետ:

ՔԵԼԱԿԱԼ

Գրաբարի նվաղ հաճախական բառերից է: Բառարանները վկայում են միայն Բուզանդի և Ծփրեմ Ասորու գործերը: Ահա այդ օրինակները. «Սա ի ժամանակին ներսէսի եպիսկոպոսապետին էր ի տան նորին իբրև թելակալ»⁷: «Հերովդէս թելակալ պահապան էր տեղւոյն»⁸: «Ուրախ երեն թելակալը ընդ լիութիւն և խոստովան եղեն հովիվը ընդ կերակրչութիւն»⁹: Բառի այլ վկայություն մեզ ծանոթ չէ: Ըստ Արմատական բառարանի նշանակում է «գործակալ, հոգաբարձու»: Իրոք, պաշտոնի անվանում է, թեև համատեքստում որոշակի չէ նշված պաշտոնի բուն էությունը: Ստուգաբանական տեսակետից դժվարություն է ներկայացնում թել բաղադրիչը: Ըստ Աճառյանի՝ թել «գործ, պաշտոն» անծանոթ բառից: Նկատենք, որ բաղադրիչը այդ իմաստով այլ կազմություններում չի հանդիպում:

Թել-ի փոխարեն առաջարկում ենք թեր ձևը, որ նշանակում է «կողմ» և վկայված է V դարից. «Յորմէ կուսէ արեգակն իցէ, յայնմ թերէ սկսւնի ի նմա լոյս ծնանել»¹⁰: Բառը հանդիպում է նաև այլ կազմություններում. առընթեր, ընթեր, ընթերակայ, թերապետութիւն «կուսակալություն» և այլն: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ գրաբարում «կողմ» իմաստն արտահայտող մի շարք բառերով մատնանշվում են պաշտոններ՝ կողմնակալ, կողմնապան, կողմնապետ, կուսակալ, դեմ(կանուր)իւն, դեմպետ, «կուսակալ» և այլն: Հավանորեն բերակալ-ն էլ այդ սիպի կազմություններից է: Ի դեպ, պարտադիր չէ, որ բառիմաստը ամբողջովին համընկնի բառի ստուգաբանական (բաղադրիչների արտահայտած) իմաստին, որովհետև նման կարգի բառերի դեպքում տեղի են ունենում իմաստի ընդլայնումներ:

Առաջարկվող թեր ուշղումը առարկությունների տեղիք կարող է տալ այն պատճառով, որ թել-ը վկայված է տարբեր հեղինակների մոտ և ըստ այդմ էլ գրչագրական աղավաղման փաստը անհամոզել է: Եթե, իրոք, վրիպման կամ գրչագրական աղավաղման հնարավորությունը մերժելի է, ապա կարելի է չբացառել տարնմանության գործոնի ազդեցությունը՝ թերակալ-թելակալ:

ԵՐԴՄՆԱԿԵՐ, ԵՐԴՄՆԱԿԵՐՈՒԹԻՒՆ

Վկայված է Հ. Մանդակունու գրքում. «Ուրպէս քրիստոնեայք են և գողք, քրիստոնեայք են և պոռնիկք, նոյն քրիստոնեայք են և հակառակողք, երդ-

7 Փ աււստոս Բ ուզանդ, էջ 224:

8 Սրբոյն Ծփրեմի Մատենագրութիւնք. հ. 1, Վենետիկ, 1836, էջ 126:

9 Նույն տեղում, էջ 160:

10 Եղնկա Կողրացույ Եզո աղանդոց. Վենետիկ, 1826, էջ 290:

մնահարք և երդմնակերք»¹¹։ «Յոմանս ստույթեան, յոմանս հայհուրթեան, յոմանս քինահանութեան, յոմանս երդմնակերութեան»¹²։ Երդմնակեր-ը որպես եզակի վկայություն նշում է ՆՀԲ-ն, իսկ երդմնակերութիւն չի վկայում (վերջինս ունի Առձեռն բառարանը)։ Երդմնակեր-ը ՆՀԲ-ն բացատրում է՝ «կերող կամ կլանող զերդումն, երդմնազանց»։ Արդի ժողովրդախոսակցական լեզվում և որոշ բարբառներում գործառում է երդում ուտել-ը, բայց ոչ թե «երդմնազանց լինել», այլ՝ «երդվել» իմաստով։ Ուրեմն, եթե երդմնակեր, երդմնակերութիւն բառերում երկրորդ արմատը ուտել բայի անցյալի կեր հիմքն է (ի դեպ, Արմատական բառարանը երդմնակեր-ը բերում է կեր արմատի տակ), ապա առկայնում է իմաստային տարբերությունը մի կողմից գրաբարյան փուլում, մյուս կողմից՝ արդի բարբառներում։ Ինչ խոսք, նման իմաստային անցումներ հնարավոր են, սակայն մեզ թվում է, որ գրաբարյան նշված բառերում կեր «ուտել» բաղադրիչը չէ։ Ինչու ենք այդպես կարծում։ Գրաբարում երդում ուտել «երդվել» բանաձևը (և բառակապակցությունը ընդհանրապես) չկա։ ՆՀԲ-ն վկայում է միայն մեկ օրինակ՝ XIV դարից. «Երդումն ուտել անձամբ վասն միոյ փողոյ և սուտ»։ ՆՀԲ-ն սա համարում է ռամկական ոճ և երդումն ուտել մեկնում՝ «երդնուլ տարապարտ»։ Այն, որ երդում ուտել, երդում կեր ժողովրդական մտածողության արգասիք է, կասկած չի հարուցում։ Ամենայն հավանականությամբ դրանք մեր լեզվում լայն տարածում են գտել գրաբարյան փուլից հետո, միջինհայերենյան շրջանից, հավանորեն նոր պարսկերենի ազդեցությամբ։ Պարսկերենում այժմ էլ հաճախական է sogand xurdan՝ բառացի երդում ուտել կապակցությունը, ընդ որում, xurdan նշանակում է «ուտել» և «խմել»։ Հարևան որոշ ժողովուրդներ վերցրել են «խմել» իմաստը, իսկ հայերը՝ «ուտել»։ Նշենք նաև, որ երդում ուտել-ի գործածության տարածքային սահմանները ներառում են հիմնականում արևելյան բարբառները, այսինքն՝ Իրանի տարածքին հարող շրջանները։

Կարծում ենք, որ գրաբարյան երդմնակեր, երդմնակերութիւն բառերի երկրորդ բաղադրիչը ուտել-ի կեր հիմքը չէ, այլ բոլորովին մի ուրիշ արմատ, որ գտնում ենք նաև խոհակեր «խոհարար», նամոզկեր «համոզող» բառերում։ Մագումնաբանորեն այս կեր արմատը աղերսվում է իրանական kar/ker «գործ, անել»-ի հետ։ Ուրեմն, երդմնակեր-ը նշանակում է ոչ թե «երդմնազանց», այլ՝ «երդվող», բառացի՝ «երդում անող»։ Իմաստային այս ճշտումը կարելի է հիմնավորել նաև տեքստի բանասիրական քննությամբ։ Մանդակունու գրքի այն գլուխը, որտեղ և հանդիպում է երդմնակեր բառը վերնագրված է՝ «Վասն շար սովորութեան երդման» (գլուխ ԺԷ)։ Այս գլուխում պախարակելի է համարվում ոչ թե (կամ ոչ միայն) սուտ երդվելը, այլ ընդհանրապես երդվելը. հմմտ. «Յորժամ շար են սովորութիւնք շարին ամենայն ուրեք. այլ առաւել ևս շար ախտ և սովորութիւնք անօրէնութեանց են և երդմունք»¹³։ «Իսկ երդմանց սովորութիւն աներկիւղածութենէ է և յանրնարող յիմարութենէ»։ Ոսկեբերանի ճառերում նույնպես բազմիցս հանդիպում ենք երդման հետ կապված դատողությունների։ Ահա նրա անդրիական ճառերից մի հատված. «Նուար և զհրամանսն Քրիստոսի, որ ասէ ոչ եթէ վասն երդմնազանցութեան միայն, այլ և վասն երդմանն. քանզի սատանայական է և կազմիչ այսմ շարեացն. լուա՞ր և ուսար զի ամենայն երդումն երդմնազանցութիւն ծնանի»¹⁴։

Մանդակունու հիշյալ գրքի նշված հատվածում կա նաև հետևյալը.

¹¹ Տե՛սն Յովհաննու Մանդակունոյ Հայոց Հայրապետի Ծառք. Վենետիկ, 1860, էջ 120—121։

¹² Նույն տեղում, էջ 87։

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 119. 123։

¹⁴ Յովհաննու Ոսկեբերանի ճառք. Վենետիկ, 1861, էջ 902։

«Մովսէս ասաց թէ սուտ մի երգնուցուս. ալլ ես ասեմ, ամենեւին մի երգ-
նուլ, մի սուտ, մի արդար» (էջ 123): Զերթվելու այս պատգամը գալիս է
Ավետարանից, որտեղ Քրիստոսը առարկելով սուտ չերթվելու պատգամին,
պատգամում է ընդհանրապես չերթվել. (տե՛ս Մտթ. Ե. 34): Ուրեմն, գրա-
թարյան եղմանակերը պետք է թարգմանել «երդվող», եղմանակերութիւն-ը՝
«երդվելի»:

ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

Վկայված է ներքին Աստուծո Վեհաշնորհ ասացուածք վասն Նիկոմեդեան քաղաքին» գործում¹⁵։ «Փոխանակ մենք ենթանաց հարանաց եղև շարժումն սրահից, և փոխանակ կաքամանց երիտասարդաց, եղև սեանց երերումն»։ Հրատարակիլը ծանոթագրում է. «Բառ օտարոտի անհայտ իմաստի»։ Համատեքստից, հատկապես հաջորդ Նախագաստութիւնից, ականհայտորեն զգացվում է, որ խոսքը վերաբերում է հագուստին՝ «մին դատէր վասն հանդերձից և մին վասն ժառանգութեան»։ Հարսն, որ կագեցան վասն հանդերձից նորա, թաղեցաւ սպիտակօք իւրեմբ»։

Մենք ենթադրում ենք, որ հաճախական մենք ենք՝ «հազուստ, հանդերձ» բառի աղավաղ ձևն է։ Վերջինս Արմատական բառարանի հավաստամամբ հանդիպում է Ոսկեբերանի գործերից մեկում՝ եղակի վկայությունով։ «Անդ հանդերձ պաճուճեալք է ժամանակ մենթանաց»։ Հունարեն բնագրի համեմատությունից սխեմա է լինի՝ «բազմագին հանդերձից կա ժամանակ»։ Ոսկեբերանի մեկ այլ ձեռագրում՝ մեմենթանաց¹⁶։

Հավանորեն մենքսան-ը ծանոթ չի եղել հետագա գրչագիրներին, և այն աղավաղվել է: Մենքսան-ը իրանական փոխառություն է՝ *manšan* (թեոփ, «կես և խոս «մարմին»): Այն թեթև կիսաազգեստ է: Իրանական ձևից ելնելով հայերենը պետք է լիներ **մանքան*։ սակայն այս ուղղումը մենք չենք առաջարկում, քանի որ վկայված օրինակները ցույց են տալիս, որ բառը հայերենում V դարից առաջ գործառուում էր դրափոխված, իսկ այդպիսի օրինակներ չառ կան:

ግሪክኛ

Վկայել է դարձյալ նփրեմ Ասորու թարգմանիչը. «Փոխանակ պաճաւանդաց և ականակապ կամարաց երէզ գօտի ածէին ընդ մէջ»¹⁷: Հրատարակիչը ծանոթագրում է՝ «նշանակութիւն բառիս անհայտ է ինձ»: Գրաբարում եզակի կիրառությամբ կա պախճաւաճդ «գօտի, գեղեցիկ զարդ»: Այս բառը կիրառել է Ոսկեբերանի հայ թարգմանիչը. «Այնպիսի պախճաւանդօք և լանջագեղ կամարօք: զսպեալ լինիցիս պնդակաքմ»¹⁸: Վերջինս համարվում է իրանական փոխառութիւն:

Ուրեմն, առանց վարանելու պանալանդ-ի պետք է ուղղել պախնալանդ:

ՇԻՂՇԱՅՔ

Արմատական բառարանը հղում է Երեմիա Մեղրեցուն, որի բառարանում համապատասխան բառի դիմաց նշված է «այսք» իմաստը: Աճառյանն էլ մեկնում է «սատանա, այս», ենթադրելով ասորական šilšu «աքիս, կուղ» ձևը:

Մի կողմ՝ թողնելով ասորերենի հետ ունեցած կապը, նշենք, որ այդ բա-

15 ՏԵ՛ս «Միոն», 1928, էջ 187:

16 Տե՛ս Արմ., Մե և թ ա ն բառի տակ:

17 «Միտուն», 1932, էջ 155:

18 Տե՛ս Արմ., Դրա իւ ճ աւ ա ն դ քառի տակ:

որ, համապատասխան վկայություններ, առ այսօր, որևէ բառարանում չկան: Քնականաբար այն ծանոթ չէ և հայկազյան բառարանագիրներին: V դարի մատենագրության ուսումնասիրության ընթացքում մենք գտանք այդ բառով երկու վկայություն. մեկը Եփրեմ Ասորու գովաթքներում, մյուսը՝ Եվսեբիոս Եմեսացու «Ջգես հալածեաց, զշիշազս խոռվեաց. քմահ մեռոյց, զթշնամի սպան, զանէծս երարծ»¹⁹: «Եւ առնուն զմարմինն սուրբ: Ուտեն զհաստեայս ընդ շիշազս և ընդ սուրբս զսրբութիւնն»²⁰, Երկու վկայություններն էլ հասաւանում են, որ ճիշտ ձեւը շիշաղէն է: Մերժելի չէ Արմատականի իմաստախն մեկնությունը, իսկ ծագումը կախելի է համարել անստույգ: Բառը պետք է բառարանագրել որպէս V դարից վկայված:

ИССЛЕДОВАНИЕ НЕСКОЛЬКИХ СЛОВ, ЗАСВИДЕТЕЛЬСТВОВАННЫХ С V ВЕКА

Л. Ш. АВАНЕСЯН

Резюме

В статье даны этимология и уточнение форм нескольких слов древнеармянского языка: *երդմակեր*—«тот, кто клянется» вторым компонентом является не *կեր* (основа прошедшего времени глагола *կտեմ*—«ем»), а иранское *kar/ker* ср. *խահակер*—«повар». *Համոզկեր*—«тот, кто убеждает». *Անդրուար*—«фазтон»,—ир. *andar*—«внутри» и *var*—«скрыть». В слове *դինեդինութիւն*—«спяниство» вторым компонентом является не *զէն* «оружие», как представлено в словарях древнеармянского языка, а ир. *zap* (основа настоящего времени глагола *zadan* «бить, ударить»). *Մենթենթան*, *պառաւանդ*—(вид одежды), *թելակալ* (наименование должности) корректируются соответственно: *Մենթան*, *պարաւանդ*, *թերակալ*. Приводятся также примеры со словами *թախանդ*—«приданое», *շիշաղէ*—«черт, сатана», не зафиксированными в словаре.

¹⁹ Եւսեբիոս Եմեսացի. Ճառք, է («Հանդես Ամսօրյա», 1958):

²⁰ Եփրեմ Ասորի. Վեշտաւան ասացուածք վասն նիկոմեդեա քաղաքին.— «Միտն», 1929, ԺԱ համ: